## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# 1. ԿԱՐԱՊԵՏ ՔՀՆ. ՎԱՆԵՑԻ

(1395 — 1476?)

ԺԵ. Դարու բազմարդիւն գրիչներէն է Կարապետ Քհն. Վանեցի, որուն գործունէութիւնը կը տարածուի 60 տարիներու վրայ: Ան որդին էր Ստեփաննոս Քահանայի և Մինայի: Աշակերտած է Մկրտիչ Քահանայի և Խլաթեցի Գրիգոր Վարդապետի: Իրեն կենակից ունեցած է նախ Թանու խաթունը (1421) և աւելի յետոյ Խոնդ խաթունը (1451): Ընդհանրապէս ապրած և աշխատած է Վանի մէջ:

Իր բեղուն գրչէն ծանօթ են մեզի աւելի քան երկու տասնեակ գործեր. կը ներկայացնենք ժամանակագրական կարգով:

1.— Աւետարան, օրինակած է, և ծաղկած առաջին անգամ, 1418ին, Վանի մէջ, Ղազար տանուտէրի ցանկութեամբ.— Ձեռ. Երեւանի, թիւ 4931:

2.— Մաշտոց, օրինակած է 1418ին, Վանի մէջ, Անդրիանոսի որդի Յովանէս տանուտէրի ցանկութեամբ.— Ձեռ. Վիեննայի, թիւ 108:

3.— Աւետարան, օրինակած է 1421ին, Վանի մէջ, Ստեփանոս կրօնաւորի համար.— Ձեռ. ատենօք Վանի Արարուց եկեղեցւոյ:

4.— Աւետարան, օրինակած է 1421ին, Վանի մէջ, տանուտէր Յովհաննէսի համար.— Ձեռ. Երեւանի, թիւ 3716:

5.— Աւետարան, օրինակած է 1422ին, Վանի մէջ, Թուլուխի որդի Յովհաննէս Քահանայի փափաքով.— Փիրղալէմեան, Նօտարք Հայոց, էջ 69:

6.— Յայսմաւուրք, օրինակած է 1427ին, ըստ երեւոյթին Վանի մէջ, Թաւաքալի որդի Յովանէս տանուտրոջ խնդրանքով.— Լ. Ս. Խաչիկեան, Յիշա. ԺԵ. Դարի, Ա. Մասն, էջ 659:

7.— Աւետարան, օրինակած է 1435ին, Վանի մէջ, բրուտ Ստեփանոսի ցանկութեամբ.— Ձեռ. Երեւանի, թիւ 4840:

8.— Յայսմաւուրքի մը մեծագոյն մասը օրինակած է 1435ին, Երկայն Ընկուզեաց Վանքին մէջ.— Ձեռ. Ս. Յակոբեանց, թիւ 25:

9.— Աւետարան, օրինակած է 1437ին, Վանի մէջ, Ղազարի որդի Սարգիս Աբեղայի ցանկութեամբ.— Ձեռ. Երեւանի, թիւ 5530:

10.— Յայսմաւուրք, օրինակած է 1442ին, Վանի մէջ, մահդեսի Մխիթարի խնդրանքով.— Լ. Ս. Խաչիկեան, Յիշա. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 604:

11.— Յայսմաւուրք, օրինակած է 1445ին, Վանի մէջ, Խութլուբէկի որդի Մկրտիչ կրօնաւորի ցանկութեամբ.— Յիշա. ԺԵ. Դարի, Ա. Մասն, թիւ 655:

12.— Աւետարան, օրինակած է 1451ին, Վանի մէջ, Ստեփանոսի դուստր Փաշայի ցանկութեամբ.— Ձեռ. Երեւանի, թիւ 4893:

digitised by A.R.A.R.@

13.— Ճառընտիր, օրինակած է 1453էն շատ առաջ, Խվաջաշահի որդի Յովանէսի համար.— Ձեռ. Երեւանի, թիւ 3791:

14.— Մաշտոց, օրինակած է 1454ին, Վանի մէջ, Թումայի որդի Աւետիս կրօնաւորի փափաքով.— Ձեռ. Երեւանի, թիւ 905:

15.— Մաշտոց, օրինակած է 1458ին, Վանի մէջ, Մելքիսեդ կրօնաւորի յանձնութեամբ.— Լ. Ս. Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մաս, թիւ 140:

16.— Գանձարան, օրինակած է 1462ին, Վանի մէջ, Հէրապետի որդի Ատոմ կրօնաւորի խնդրանքով.— Ձեռ. Երեւանի, թիւ 5798:

17.— Աւետարան, օրինակած է 1462ին, Վանի մէջ, Մելքիսէթ տանուտրոջ խնդրանքով.— Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մաս, թիւ 229:

18.— Մաշտոց, օրինակած է 1467ին, Վանի մէջ: Ստացող՝ Յովանէս Քահանայ.— Ձեռ. Երեւանի, թիւ 4162:

19.— Գանձարան, օրինակած է 1467ին, Վանի մէջ.— Նոտարք, էջ 231-232:

20.— Ճաշոց, օրինակած է Վանի մէջ, 1473ին, երբ 78 տարեկան էր: Ստացողք՝ Խոջա Մարշահ եւ եղբայրը Շաքար.— Ձեռ. Երեւանի, թիւ 4875:

21.— Աւետարան, օրինակած է 1475ին, Վանի մէջ, Մկրտչի որդի աղքատ Յովսէփի խնդրանքով.— Ձեռ. Երեւանի, թիւ 5013:

22.— Աւետարան, օրինակած է 1475ին, Վանի մէջ, ոսկերիչ Ապահանշահի խնդրանքով.— Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մաս, թիւ 482:

23.— Ճառընտիր — Տօնականի մը օրինակութեան մասնակցած է 1476ին «տկար անձամբ», եւ գրած է 20 տետր, եւ ապա կազմած է զայն իր «տկար» մատներով: Ստացող՝ Կարապետ Քահանայ՝ որդի Մկրտիչ Քահանայի.— Յիշտ. ԺԵ. Դարի, Բ. Մաս, թիւ 506:

---

## 2. ԿԱՐԱՊԵՏ ՔՀՆ. ՈՍՏԱՆՑԻ

(1439 — 1467)

ԺԵ. Դարու արդիւնաւոր գրիչներէն է Կարապետ Քահանայ Ոստանցի, որդի Ստեփանոս Քահանայի եւ Փաշայի: Ան ապրած եւ գործած է Ոստանի մէջ: Իր գործունէութիւնը կը տարածուի երեք տասնամեակներու վրայ: Այդ շրջանին իր արտադրած ձեռագիրներէն մեզի ծանօթ են մօտ տասնեակ մը. կը ներկայացնենք ժամանակագրական կարգով:

1.— Ճաշոց, օրինակած է 1439ին, Ոստան ծովահայեաց քաղաքին մէջ, Թումայի որդի տանուտէր Յոհաննէսի պատուէրով.— Լ. Ս. Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մաս, թիւ 556:

2.— Գանձարան, օրինակած է 1440ին, Ոստանի մէջ, Թումայի որդի տանուտէր Նարեկացի հւան Պետրոսի փափաքով.— Ձեռ. Երեւանի, թիւ 5404: Յիշտ. ԺԵ. Դարի, Ա. Մաս, էջ 509:

3.— Գանձարան, օրինակած է 1444ին, Ոստանի մէջ, տանուտէր Ատոմի եւ իր կենակից Դովլաթի փափաքով.— Ձեռ. Երեւանի, թիւ 8058:

4.— Ժամագիրք, օրինակած է 1445ին, Ոստանի մէջ, խնդրանքովը Ստեփանոսի որդի Յակոբ կրօնաւորի, որուն եղբայրը Լուսաւոր նահատակ-

digitised by A.R.A.R.@

*ուած է «յանուրենաց, փառն անուանն Երիտասի»։— Ցէշտ. ԺԵ. Դարէ, Ա. Մասն, Թիւ 656։*

5.— Գանձարան, *օրինակած է 1457ին, Ոստանի մէջ, Խոջայ Սանփանայի որդի Կարապետ Բահանայի խնդրանօք։— Ձեռ. Երևանի, Թիւ 4091։*

6.— Ճաշոց, *օրինակած է 1459ին, Ոստանի մէջ, Խոջայ Աբդըլ-Ազիզի ցանկութեամբ.— Լ. Ս. Խաչիկեան, Ցէշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, Թիւ 154։*

7.— Աւետարան, *օրինակած է 1461ին, Ոստանի մէջ, Գուհարի փափաքով.— Ցէշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, Թիւ 206։*

8.— Աւետարան, *օրինակած է 1467ին, Ոստանի մէջ, Աւետիսի որդի Սուլտանշահի համար.— Ձեռ. Երևանի, Թիւ 6390։*

9.— Աւետարան, *օրինակած է 1467ին, Ոստանի մէջ, Թումայի որդի Յովհաննէս Քահանայի ցանկութեամբ.— Ցէշտ. ԺԵ. Դարի, Բ. Մասն, Թիւ 333։*

*Ն. ԱՐՔԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ*